



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«11» հունվար 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Անանյան

ԳԲԽ-53/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի 25.12.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 25.12.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊԶԲ-16/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելիս առաջացել է տեխնիկական խնդիր՝ կապված www.armeps.am կայքի հետ:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգին իր մասնակցության հայտը www.armeps.am համակարգ իր կողմից ներբեռնվել է 19.11.2015թ., սակայն Պատվիրատուի մոտ այն ցույց է տրվել 22.11.2015թ.:

Ընկերությունը նշել է, որ 19.11.2015թ. դրությամբ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով: Այնուհետև՝ 20.11.2015թ. Ընկերության մոտ առաջացել է հարկային պարտավորություն, որը սակայն կատարվել է հենց նույն օրը:

Մինչույն ժամանակ, քանի որ 20.11.2015թ. հաջորդող երկու օրերը եղել են ոչ աշխատանքային, ուստի 20.11.2015թ. Ընկերության կողմից կատարված հարկային պարտավորությունը՝ հարկերի մարումը, նոր միայն երևացել է 23.11.2015թ., ինչի հետևանքով Ընկերության մոտ 22.12.2015թ. դրությամբ առկա է եղել հարկային պարտավորություն:

Ընկերությունը տեղեկացրել է, որ www.armeps.am կայքի ոչ լիարժեք աշխատանքի հետևանքով հայտերի բացման օրն ու ժամը չի համընկել Ընթացակարգի հրավերում սահմանված հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի հետ: Մասնավորապես, հայտերի բացումը տեղի է ունեցել 07.12.2015թ.:

Ընկերությունը բողոքով խնդրել է չկայացած հայտարարել «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

«Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով 08.01.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-53/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է իր բողոքը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը 11.01.2016թ. թիվ 02/61-78 գրությամբ ներկայացրել է «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված Ընթացակարգի թվով 102 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին մասի դրույթներով, ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 22.11.2015թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն, որի չափը կազմել է 239 630 (երկու հարյուր երեսունինը հազար վեց հարյուր երեսուն) ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ Պատվիրատուն Կենտրոնին վերոհիշյալ գրությամբ խնդրել է Ընկերության նկատմամբ նախաձեռնել պաշտոնական ընթացակարգ՝ վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-53/15 բողոքը քննող հանձնաժողովի 08.01.2016թ. ժամը 17:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-53/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-53/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով

կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն 25.12.2015թ. բողոքով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/12» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով **19.11.2015թ.** հայտ է ներկայացրել:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված՝ www.armeps.am համակարգով հայտերի ներբեռնման վերաբերյալ տեղեկատվության պարունակող համացանցային կայքի արտատպման համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու համար հայտը ներկայացրել է **22.11.2015թ.**:

4. Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարին ուղղված Երևանի քաղաքապետարանի 24.11.2015թ. թիվ 01/61-24514 գրության՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացումը, որը նշանակված էր 23.11.2015թ., խափանվել է www.armeps.am համակարգում ընթացակարգը գնահատող հանձնաժողովին «հայտերը գնահատել» առաջադրանքը չգալու հիմքով:

5. Ի պատասխան Երևանի քաղաքապետարանի 24.11.2015թ. թիվ 01/61-24514 գրությանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.12.2015թ. թիվ 1/73-1/37743-15 գրությամբ ներկայացրել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 30.11.2015թ. թիվ 01/03.3/3556-15 գրությունը, համաձայն որի տեխնիկական խնդիրը ուղղվել է, և հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Ընթացակարգը անհրաժեշտ է շարունակել էլեկտրոնային եղանակով:

6. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 29.12.2015թ. թիվ 01/04.1/3897-15 գրությամբ դիմել է էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող ընկերությանը՝ «ԱյՅուՆԵթվորքս» ՍՊԸ-ին՝ խնդրելով պարզաբանել, թե «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտը ներբեռնելու և Պատվիրատուի մոտ այն ցույց տալու ժամկետների տարբերությունը կարող էր արդյոք լինել Armepps համակարգի ծրագրային խափան-

ման արդյունք, ինչպես նաև, Երևանի քաղաքապետարանի կողմից արձանագրած՝ 23.11.2015թ. Ընթացակարգի հայտերի բացման անհնարինության պատճառ հանդիսացած տեխնիկական խնդիրը կարող էր արդյոք պայմանավորել Ընկերության կողմից www.armeps.am համակարգում հայտը ներբեռնելու և Պատվիրատուի մոտ այն ցույց տալու ժամկետների տարբերությունը:

7. Ի պատասխան Կենտրոնի 29.12.2015թ. թիվ 01/04.1/3897-15 գրության՝ «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ն գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/17» և «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/12» ծածկագրերով ընթացակարգերի ընթացքում տեղի ունեցած խնդիրները ոչ մի կերպ կապված չեն մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հետ: Խնդիրը պայմանավորված է եղել ընդհանուր համակարգի ծանրաբեռնվածությամբ, որը սակայն շտկվել է, և ընթացակարգը շարունակվել է իր բնականոն ընթացքով՝ առանց հետագա խոչընդոտների:

«ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից հայտը ներբեռնվել է www.armeps.am համակարգ ciacangnumner» օգտատիրոջ կողմից 22.11.2015թ. ժամը 19:30:18-ին: Հայտի ֆայլի անվանումը «Hayt_TENDERS.zip» է:

4. ԳԲԽ-53/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի 25.12.2015թ. ներկայացրած բողոքը, Երևանի քաղաքապետարանի 11.01.2016թ. թիվ 02/61-78 գրությունը, «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ի գրությունը, հայտնում է հետևյալը:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ **հայտը ներկայացնելու օրվա դրությամբ** ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 71-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում **տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:**

Համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված www.armeps.am համակարգով հայտերի ներբեռնման վերաբերյալ տեղեկատվություն պարունակող համացանցային կայքի արտատպման՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու համար Ընկերությունը հայտը ներկայացրել է **22.11.2015թ. ժամը 19:30:17-ին:**

«ԱյՅուՆԵթվորքս» ՍՊԸ-ն գրությամբ հայտնել է, որ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից հայտը ներբեռնվել է www.armeps.am համակարգ «ciacangnumner» օգտատիրոջ կողմից **22.11.2015թ. ժամը 19:30:18-ին:**

Այսպիսով, Պատվիրատուի կողմից ներկայացված www.armeps.am համակարգով հայտերի ներբեռնման վերաբերյալ տեղեկատվություն պարունակող համացանցային կայքի արտատպման մեջ արտացոլված՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու ամսաթիվը և ժամը համընկնում են «ԱյՅուՆԵթվորքս» ՍՊԸ-ի, որպես www.armeps.am էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող ընկերության կողմից Կենտրոնին ներկայացված գրության մեջ նշված՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելու ամսաթվի և ժամի հետ:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հայտերի գնահատումն իրավերով սահմանված ժամկետից ուշ իրականացնելուն, ապա ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.12.2015թ. թիվ 1/73-1/37743-15 գրությամբ ներկայացրել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 30.11.2015թ. թիվ 01/03.3/3556-15 գրությունը, համաձայն որի տեխնիկական խնդիրը ուղղվել է, և հաշվի առնելով այդ հանգամանքը՝ առաջարկել է Ընթացակարգը շարունակել էլեկտրոնային եղանակով:

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներով՝ Պատվիրատուն համապատասխան հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, ի պատասխան որի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.12.2015թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 22.11.2015թ. դրությամբ ունեցել է 239 630 (երկու հարյուր երեսունինը հազար վեց հարյուր երեսուն) ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով «ԱյՅուՆԵթվորքս» ՍՊԸ-ի գրությունը՝ գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, հետևաբար «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի 25.12.2015թ. բողոքն անհիմն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի 25.12.2015թ. բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝




Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-53/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան